ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 22 - Ա
17 փետրվարի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ, 1.22-րդ կետերի դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված 1-ի.

2) 2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի կազմակերպություններում մարզային փրկարարական վարչության կողմից հրշեջ-մարտավարական վարժանքների անցկացման պլան-ժամանակացույցը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների շտաբի պետերի հետ անցկացվող 2014 թվականի հրամնատարական պատրաստության պարապմունքների անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն որոշմամբ հաստատված հավելված 1-ում, հավելված 2-ում և հավելված 3-ում ներառված համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին՝ սահմանված ժամկետներում իրականացնել հավելված 1-ում, հավելված 2-ում և հավելված 3-ում նշված միջոցառումները և յուրաքանչյուր միջոցառման կատարման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում փաստաթղթերը ներկայացնել մարզային փրկարարական վարչություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Մ. Մանուկյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ